ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾՆԻՆ ՆՎԻՐՎԵՑ ՔՐԻՍՏՈՍԻ ՎԱՐՇԱՄԱԿԻ ԿՐԿՆՕՐԻՆԱԿԸ

Սեպտեմբերի 17-ին Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ծայրագույն Պատրիարք և Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդունեց Հյուսիսային Իտալիայից Հայաստան ժամանած մի խումբ ուխտավորների՝ գլխավորությամբ մոնսինյոր Դոն Ջուզեպպե Գիբերտի:

Հանդիպման ընթացքին մոնսինյոր Գիբերտին Նորին Սրբությանը ներկայացրեց Թուրինում պահվող Քրիստոսի վարշամակի պատմությունը և Թուրինի կարդինալ Սեվերինո Պոլետտոյի նախաձեռնությունը, որով վարշամակի կրկնօրինակները նվիրաբերվում են քրիստոնեական Եկեղեցիներին: Այնուհետև մոնսինյոր Դոն Ջուզեպպե Գիբերտին Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնին նվիրեց Թուրինում պահվող Հիսուս Քրիստոսի վարշամակի կրկնօրինակը:

Վեհափառ Հայրապետը, ողջունելով Ս. Էջմիածին այցելած ուխտավորներին, Հայրապետական իր օրհնությունն ու շնորհակալությունը հայտնեց նրանց թանկագին նվերի համար: Նորին Սրբությունը հույս հայտնեց, որ Մայր Աթոռի թանգարանում պատանքի կրկնօրինակի ցուցադրումը հայ հավատացյալներին նույնպես առավել հաղորդակից կդարձնի Տիրոջը և կնպաստի նրանց հավատքի զորացմանը:

Ամենայն Հայոց Կաթողիկոսն անդրադարձավ նաև Հայ և Կաթոլիկ Եկեղեցիների միջև առկա ջերմ հարաբերություններին՝ վերհիշելով Հռոմի Բենեդիկտ ԺԶ Պապի հրավերով այս տարվա մայիսին Վատիկան կատարած իր պաշտոնական այցը: Վերջում Նորին Սրբությունը պատասխանեց ներկաների հարցերին:

ՄԱՅՐ ԱԹՈՌ Ս. ԷՋՄԻԱԾՆԻ
ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՆԱԽԱԳԱՀԸ ԱՄԵՐԻԿԱՅԻ ՄԻԱՑՅԱԼ ՊԵՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՆԱԽԱԳԱՀԻ ՀԵՏ

ՀԱՅԿԱԿԱՆ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՄԻՈՒԹՅՈՒՆԻՍԿԻՍ ԳԻՆԵԼ ԵՎ ՀԱՅԿԱԿԱՆ ԿԵՆՍԱԳՈՐԾԱԿԱՆ ՄԻՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԳԱՀ ՍԵՐԳԵՅ ՍԱՐԳՍՅԱՆԻ ՀԵՏ